


ՏԻՄ-երի հանդեպ հանրային
վստահության գործոնները. բանալին
ՏԻՄ-երի ձեռքում է

Հանրային քաղաքականության ուղեցույց

Հետազոտական ռեսուրսների կովկասյան
կենտրոն - Հայաստան
Հունվար 2017



Բովանդակություն

Հապավումներ.....	3
Համառոտագիր	3
Ներածություն.....	4
Տեսական և կոնցեպտուալ շրջանակ	6
Տվյալադարան, մեթոդ, փոփոխականներ	12
Արդյունքներ.....	16
Քննարկում և առաջարկներ.....	17
Օգտագործված գրականություն	23

Հապավումներ

ԱՄՆ ՄԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
«ՀաՄաՏեղ» ծրագիր	«Հանրային մասնակցություն տեղական ինքնակառավարմանը» ծրագիր
ՀԿ	Հասարակական կազմակերպություն
ՀՌԿԿ	Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոն
ՏԻՄ	Տեղական ինքնակառավարման մարմին

Համառոտագիր

ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահությունը տեղական ինքնակառավարման արդյունավետության և ՏԻՄ աշխատանքներին հանրային մասնակցության գլխավոր գրավականներից է: Սակայն, Հայաստանում ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության մակարդակը շարունակում է համեմատաբար ցածր մնալ: Ինչպես ցույց է տալիս «ՀաՄաՏեղ» ծրագրի շրջանակներում 2015թ. անցկացված համապետական հարցման արդյունքների վերլուծությունը, Հայաստանում ՏԻՄ-երի աշխատանքի (հանրային ծառայությունների մատուցում, թափանցիկություն, տեղական ժողովրդավարություն, կոռուպցիա) վերաբերյալ հանրային ընկալումները կանխորոշում են ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահությունը: Օրինակ՝ բնակիչների հետ ավելի շատ խորհրդակցող համայնքի ղեկավարներն ավելի մեծ վստահություն են վայելում: Բնակիչներն ավելի քիչ են վստահում այն ՏԻՄ-երին, որտեղ կաշառատվությունն ավելի մեծ դեր է խաղում որևէ խնդիր լուծելու համար: Սույն հետազոտության արդյունքները հաստատում

են հանրային կառավարման գրականության մեջ շրջանառվող այն տեսակետը, ըստ որի տեղական իշխանություններն իրենք կարող են ազդել հանրային վստահության մակարդակի վրա: Ջեկույցն առաջարկում է հանրության վստահությունը շահելու կամ պահպանելու ցանկություն ունեցող ՏԻՄ-երի ներկայացուցիչներին դրական ազդեցություն գործել հանրային ընկալումների վրա՝ բարելավելով համայնքային ծառայությունների մատուցման որակը, ՏԻՄ-երի աշխատանքի թափանցիկությունը, կառավարման ժողովրդավարական ընթացակարգերը, ինչպես նաև նվազեցնելով կոռուպցիոն ռիսկերը ՏԻՄ-երում: Ջեկույցը ՏԻՄ-երին առաջարկում է հանրային վստահության ձեռքբերումը դարձնել իրենց առօրյա գործունեության թիրախներից մեկը:


Ներածություն

Իշխանությունների հանդեպ հանրային վստահությունը գրականության մեջ հայտնի է նաև «քաղաքական վստահություն» ձևակերպմամբ: Սահմանումներից մեկի համաձայն, քաղաքական վստահությունն իշխանությունների ազնվության, արդյունավետության և իրենց խոստումներին հավատարիմ լինելու վերաբերյալ քաղաքացիների գնահատականներն են (Blind 2007: 3-4): Ըստ մեկ այլ սահմանման, քաղաքական վստահությունը քաղաքացիների համոզմունքն է, որ իշխանությունները ճիշտ քայլեր են ձեռնարկում, նույնիսկ եթե նրանց նկատմամբ մշտական վերահսկողություն չկա (Miller and Listhaug, 1990: 358): Քաղաքական վստահությունը խթանում է հանրային աջակցությունը պետական կառավարման գործին և բարելավում վերջինիս որակը: Օրինակ՝ քաղաքական վստահության ավելի բարձր ցուցանիշներ ունեցող հասարակություններում քաղաքացիներն ավելի են հակված ենթարկվել օրենքներին (Marien and Hooghe 2011), վճարել հարկերը (Scholz and Lubell 1998), ինչպես նաև զոհողությունների գնալ իշխանությունների կողմից իրականացվող ծրագրերը սատարելու համար (Hetherington 2004, Chapter 3): Կասկածից վեր է, որ հանրային վստահության բարձր մակարդակից մեծապես կարող են օգտվել նաև տեղական իշխանությունները: Խոսքը հատկապես վերաբերում է զարգացող այն երկրների ՏԻՄ-երին, որոնք դեռ կայացման փուլում են, կենտրոնական իշխանություններից

բավարար օգնություն ստանալ չեն կարող, և, հետևաբար, բնակչության աջակցության ավելի մեծ կարիք ունեն: Արդյո՞ք հայաստանյան ՏԻՄ-երը վայելում են բնակչության վստահությունը:

Ինչպես ցույց են տալիս ՀՌԿԿ-Հայաստանի կողմից անցկացված «Կովկասյան բարոմետր» համապետական հարցման (2009-2015թթ.) տվյալները, ՀՀ քաղաքացիների մոտ մեկ երրորդն է վստահում իրենց տեղական ինքնակառավարման մարմիններին¹ (Caucasus Research Resource Centers 2009-2015): Ընդ որում, վերջին տարիների ընթացքում այս ցուցանիշը համեմատաբար կայուն է մնացել (*Գծապատկեր 1*): Միաժամանակ, նույն գծապատկերի համաձայն, նշված ժամանակահատվածում ՏԻՄ-երին չվստահող հայաստանցիների մասնաբաժինը ավելացել է՝ 28-ից հասնելով 40 տոկոսի:

Գծապատկեր 1. Հանրային վստահությունը ՏԻՄ-երի հանդեպ Հայաստանում, 2009-2015թթ.



Տվյալների աղբյուրը՝ ՀՌԿԿ «Կովկասյան բարոմետր» (2009-2015թթ.) Ծանոթագրություն. Գծապատկերում «Չգիտեմ» և «Հրաժարվում եմ պատասխանել» պատասխաններն արտացոլված չեն:

¹ Տվյալների առցանց վերլուծության գործիքը հասանելի է Հետազոտական ռեսուրսների կովկասյան կենտրոնի «Կովկասյան բարոմետրի» կայքէջում (<http://caucasusbarometer.org/en/>):

Ինչպես ցույց է տալիս *Գծապատկեր 1*-ը, հայաստանյան ՏԻՄ-երը ոչ միայն հանրային վստահություն շահելու, այլև ունեցած վստահությունը չկորցնելու խնդիր ունեն։ Ըստ էության, խնդրո առարկա ժամանակահատվածում հայաստանյան ՏԻՄ-երը չեն կարողացել ավելացնել իրեց վստահող քաղաքացիների (սատարողների) մասնաբաժինը։ Փոխարենը՝ ավելացել է չվստահողների մասնաբաժինը՝ չեզոք դիրքորոշում ունեցողների հաշվին։ Հանրային վստահության ցածր ցուցանիշները միանշանակ արգելակում են քաղաքացիների աջակցությունը ՏԻՄ-երին։ Օրինակ՝ դժվար է պատկերացնել, որ ՏԻՄ-ին չվստահող բնակիչն իր ժամանակը, գիտելիքները կամ միջոցները կտրամադրի ՏԻՄ-ի նախաձեռնած որևէ միջոցառմանը նպաստելու համար։ Հետևաբար, չափազանց կարևոր է օր առաջ հասկանալ այն գործոնները, որոնք Հայաստանում պայմանավորում են հանրային վստահությունը ՏԻՄ-երի հանդեպ։

Տեսական և կոնցեպտուալ շրջանակ

Հանրային կառավարման գրականության մեջ քաղաքական վստահության գործոնների վերաբերյալ ուսումնասիրությունները կարելի է բաժանել երկու մոտեցումների։ Առաջին մոտեցման ներկայացուցիչների (Almond and Verba 1965; Glanville and Paxton 2007; Uslaner 2002) կարծիքով, քաղաքական վստահության աղբյուրներն արտածին են (այն է՝ իշխանություններից դուրս գտնվող)։ Օրինակ, այդ աղբյուրները կարող են մշակութային լինել։ Որևէ հասարակությունում ծնված և մեծացած անձնավորություն վաղ տարիքից սոցիալիզացիայի տարբեր մեխանիզմներով (ընտանիք, խաղահրապարակ և այլն) սովորում է վստահել կամ չվստահել։ Ի վերջո, (չ)վստահելը դառնում է բնավորության կայուն գիծ և ազդում նաև իշխանությունների հանդեպ մարդու վստահության մակարդակի վրա։ Կամ էլ, իշխանությունների հանդեպ հանրային վստահության աղբյուրը կարող է թաքնված լինել հասարակության քաղաքական մշակույթի մեջ։ Քաղաքացիական ակտիվ կյանք ունեցող հասարակություններում, օրինակ, հասարակական կազմակերպությունների կամ կամավորական խմբերի անդամների միջև եղած միջանձնային վստահությունը կարող է տարածվել դեպի վեր՝ իշխանությունների

հանդեպ (Putnam 1993): Հարկ է նաև նշել, որ այս մոտեցումը, վստահության պատճառները իշխանություններից դուրս փնտրելով, իշխանություններին պասիվության մղող հետևյալ վտանգավոր ուղերձն է պարունակում իր մեջ. որքան էլ իշխանությունները բարելավեն իրենց աշխատանքը, միևնույն է, հանրային վստահության մակարդակը չի փոխվի, քանի որ վերջինս պայմանավորված է այլ գործոններով:

Ի տարբերություն առաջինի, երկրորդ մոտեցումը հանրային քաղաքականության տեսանկյունից ավելի կիրառական ուղերձ է պարունակում: Մասնավորապես, այս մոտեցման ներկայացուցիչները գտնում են, որ իշխանության հանդեպ հանրային վստահության աղբյուրները ներծին են (այն է՝ բխում են հենց իշխանություններից): Քաղաքական վստահության ձևավորման հիմքում ընկած են հենց իշխանությունների աշխատանքի (performance) վերաբերյալ հանրային ընկալումները: Որքան բարձր է հանրության գնահատականն իշխանության իրականացրած գործառույթների (օրինակ՝ տնտեսական աճի ապահովում կամ ժողովրդավարական կառավարում) վերաբերյալ, այնքան ավելի բարձր է հանրության վստահության մակարդակն այդ իշխանության հանդեպ: Հարկ է նշել, որ մի շարք աշխատություններ (Kenneth and Norris 2000; Mishler and Rose 2001; Wong et al. 2011), միաժամանակ ստուգելով մշակութային և գործառութային գործոնների ազդեցությունները, կարողացել են ապացուցել երկրորդի առավելությունն առաջինի նկատմամբ: Այդ ուսումնասիրություններից մեկը (Mishler and Rose 2001) գործառութային գործոնների առավելությունը ցուցադրել է Արևելյան Եվրոպայի և նախկին ԽՍՀՄ հետ-սոցիալիստական մի շարք պետությունների օրինակով (ցավոք, Հայաստանն ուսումնասիրված երկրների ցանկում չի եղել):

Չնայած գործառութային գործոնների կարևորությունը հաստատող ուսումնասիրությունների քանակի աճին, այստեղ դեռևս չլուծված բազմաթիվ խնդիրներ են մնում: Օրինակ՝ իշխանությունների գործառույթները բազմաթիվ են. արդյո՞ք բոլոր գործառույթների վերաբերյալ հանրային գնահատականները հավասար ազդեցություն ունեն քաղաքական վստահության ձևավորման վրա:

Արդյո՞ք կան գործառույթներ, որոնք առավել մեծ ազդեցություն ունեն: Արդյո՞ք կենտրոնական իշխանությունների հանդեպ հանրային վստահության գործոնները տարածելի են տեղական իշխանությունների հանդեպ վստահության ոլորտ: Արդյո՞ք քաղաքական վստահության գործոնները համամարդկային են, այլ կերպ ասած, արդյո՞ք դրանք կիրառելի են, օրինակ, քաղաքական տարբեր մշակույթներ կամ տնտեսական զարգացման տարբեր մակարդակներում գտնվող հասարակությունների հանդեպ:

Սույն Զեկույցի հիմքում ընկած ուսումնասիրությունը ևս որդեգրում է քաղաքական վստահության աղբյուրների գործառութային մոտեցումը՝ փորձելով պատասխանել վերոհիշյալ հարցերին: Մասնավորապես, ուսումնասիրությունն ստուգում է, թե որքանով են հայաստանյան ՏԻՄ-երի գործառույթների որակի վերաբերյալ հանրային գնահատականները կանխատեսում ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության մակարդակը և թե որ գործառույթների գնահատականներն են ամենից ազդեցիկ հանրային վստահության ձևավորման համար: Մասնավորապես, աշխատանքը դիտարկում է ՏԻՄ-երի գործառույթների չորս ոլորտ՝ հանրային ծառայությունների մատուցում, գործունեության թափանցիկություն, հանրային մասնակցություն որոշումների ընդունմանը և կոռուպցիոն ռիսկեր:

Բավարարվածություն հանրային ծառայությունների մատուցման որակից և քաղաքական վստահություն

Հանրային ծառայությունների որակից բավարարվածությունն արտահայտում է քաղաքացիների ընկալումներն իշխանությունների մատուցած ծառայությունների (օրինակ՝ համայնքի մաքրության պահպանում կամ մշակութային կյանքի կառավարում) վերաբերյալ: Յուրաքանչյուր երկրում տեղական ծառայությունների բնույթը և քանակը կարող է տարբեր լինել՝ կախված տվյալ երկրի ապակենտրոնացման մակարդակից, կառավարման ավանդույթներից կամ այլ գործոններից: Հետևաբար, սույն զեկույցը դիտարկում է այն ծառայությունները, որոնք մատուցվում են Հայաստանի ՏԻՄ-երի կողմից: ՏԻՄ-երի մասին

սակավաթիվ ուսումնասիրություններից մի քանիսը ցույց են տալիս, որ բավարարվածությունը ՏԻՄ-երի մատուցած հանրային ծառայություններից դրականորեն է փոխկախված ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության մակարդակի հետ: Օրինակ, նորագույն ուսումնասիրություններից մեկի (Fitzgerald and Wolak 2016) համաձայն, Արևմտյան Եվրոպայի տեղական ինքնակառավարման մարմինների հանդեպ հանրային վստահության մակարդակը կախված է այդ մարմինների մատուցած մի շարք ծառայությունների (օրինակ՝ երեխաների խնամք, առողջապահություն, տրանսպորտ) վերաբերյալ հանրային ընկալումներից: Չինաստանում ևս, քաղաքային իշխանությունների հանդեպ վստահությունը ձևավորող ազդեցիկ գործոններից մեկն այդ իշխանությունների մատուցած ծառայությունների (տրանսպորտ, հանրային կրթություն, շրջակա միջավայր, հանրային առողջապահություն և այլն) հանրային գնահատականն է (Zhao and Hu 2015): Ելնելով վերոհիշյալից, մենք ևս ենթադրում ենք, որ Հայաստանում ՏԻՄ-երի մատուցած ծառայությունների (օրինակ՝ համայնքի մաքրության ապահովում կամ մշակութային կյանքի կառավարում) վերաբերյալ ընկալումներն փոխկախված են ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության մակարդակի հետ:

Ենթադրություն Ա. Հայաստանում ՏԻՄ-երի մատուցած հանրային ծառայությունների վերաբերյալ հանրային գնահատականները դրականորեն են կանխորոշում ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության մակարդակը :

Պրոակտիվ թափանցիկություն և քաղաքական վստահություն

Իշխանության թափանցիկությունը քաղաքացիների իրավունքն է իմանալ այն, ինչ կատարվում է իշխանության ներսում (Piotrowski and Ryzin 2007: 306): Թափանցիկությունը կարող է լինել ցպահանջ (երբ քաղաքացին տեղեկանում է իշխանության գործունեության մասին սեփական նախաձեռնությամբ) և պրոակտիվ (երբ իշխանությունն ինքն է տեղեկացնում քաղաքացուն սեփական նախաձեռնությամբ): Տեղական ինքնակառավարման ոլորտում իշխանությունների պրոակտիվ թափանցիկությունը տարբեր դրսևորումներ ունի: Հայաստանում ՏԻՄ-երի պրոակտիվ թափանցիկության օրինակ կարող է լինել համայնքի բյուջեի,

ծախսերի կամ ավագանու ընդունած որոշումների մասին ծանուցումն անկախ այն բանից՝ բնակիչները հետաքրքրված են, թե ոչ: Ջգալի թվով ուսումնասիրություններ կան, որոնք ցույց են տալիս, թե ինչպես են կենտրոնական իշխանությունների թափանցիկության զանազան դրսևորումները դրականորեն ազդում քաղաքական վստահության մակարդակի վրա (Torres 2005; Hood 1991; Attmore 2011): Որոշ աշխատանքներ էլ հաստատում են այդ դրական կապի գոյությունը տեղական ինքնակառավարման մակարդակում: Օրինակ՝ Չինաստանում քաղաքային իշխանությունների հանդեպ հանրային վստահության գործոններից է այդ իշխանությունների կողմից իրենց կատարած աշխատանքի, մասնավորապես՝ ծախսերի վերաբերյալ պրոակտիվ ծանուցման որակի հանրային գնահատականը (Zhao and Hu 2015): Հարավային Կորեայում տեղական իշխանությունների հանդեպ հանրային վստահության աղբյուր է ՏԻՄ-երի աշխատանքների հանրայնացումը էլեկտրոնային կառավարման (e-governance) միջոցներով (Kim and Lee 2012): Ելնելով վերոհիշյալից, մենք նս նման դրական կապ ենք ակնկալում հայաստանյան ՏԻՄ-երի պարագայում:

Ենթադրություն Բ. Հայաստանի ՏԻՄ-երի պրոակտիվ թափանցիկության վերաբերյալ հանրային գնահատականը դրականորեն է կանխորոշում է ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահությունը:

Հանրային մասնակցություն որոշումների ընդունմանը և քաղաքական վստահություն

Քաղաքական վստահության գործոններից մեկը հանրության բավարարվածությունն է այն բանից, թե ինչպես է երկրում գործում ժողովրդավարությունը (Christensen and Lægreid 2005; Norris 1999; Marlowe 2004): Հանրության մասնակցությունն իշխանությունների կողմից որոշումների կայացմանը, այլ կերպ ասած՝ «լսված լինելը», ժողովրդավարության կարևոր ցուցիչներից է, ինչպես նաև քաղաքական վստահության գործոններից մեկը (Kim, 2010; Tolbert and Mossberger, 2006): Նաև ՏԻՄ-երի վերաբերյալ ուսումնասիրություններն են հաստատում, որ բնակիչների մասնակցությունը տեղական իշխանությունների որոշումների կայացման գործընթացների

նպաստում է ՏԻՄ-երի հանդեպ վստահության աճին (Ulbig 2008; Zhao and Hu 2015): Հետևաբար, մենք ակնկալում ենք, որ հայաստանյան ՏԻՄ-երի պարագայում ևս դրական կապ կա տեղական ժողովրդավարության և քաղաքական վստահության միջև:

Ենթադրություն Գ. Հանրության ներկայացուցիչների կողմից Հայաստանում ՏԻՄ-երի ընդունած որոշումների վրա ազդեցություն ունենալու ընկալումը դրականորեն է կանխորոշում ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության մակարդակը:

Ենթադրություն Դ. Հանրության ներկայացուցիչների կողմից համայնքի ղեկավարի ընդունած որոշումների վրա ազդեցություն ունենալու ընկալումը դրականորեն է կանխորոշում ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության մակարդակը:

Կաշառատվություն և քաղաքական վստահություն

Բազմաթիվ ուսումնասիրություններ ցույց են տվել, որ քաղաքական վստահությունը սերտորեն փոխկախված է կոռուպցիայի հետ: Մասնավորապես, կոռուպցիայի (որպես ընդհանուր երևույթ) հետ առնչվելու փորձառությունը և դրա առկայության վերաբերյալ ընկալումները բացասաբար են անդրադառնում իշխանությունների հանդեպ հանրային վստահության մակարդակի վրա (Seligson 2002; Anderson and Tverdova 2003; Della Porta 2000; Van der Meer 2010; Morris and Klesner 2010): Մեզ հայտնի չէ որևէ ուսումնասիրություն, որն ստուգել է կոռուպցիայի, առավել ևս՝ կաշառատվության վերաբերյալ ընկալումների ազդեցությունը քաղաքական վստահության վրա տեղական մակարդակում: Սույն զեկույցը դիտարկում է հայաստանյան ՏԻՄ-երում կաշառատվության հանրային ընկալումները՝ կաշառքը համարելով կոռուպցիայի դրսևորում: Մեր կարծիքով, հայաստանյան համայնքներում կաշառք երևույթը բացասաբար է ընկալվում: Հետևաբար, մենք ակնկալում ենք, որ հայաստանյան ՏԻՄ-երի մակարդակում ևս փոխկախվածություն գոյություն ունի կաշառատվության առկայության վերաբերյալ հանրային ընկալումների և ՏԻՄ-երի հանդեպ քաղաքական վստահության միջև:

Ենթադրություն Ե. Հայաստանյան ՏԻՄ-երում կաշառատվության առկայության վերաբերաբերյալ հանրային ընկալումները բացասաբար են կանխորոշում ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության մակարդակը:

Տվյալադարան, մեթոդ, փոփոխականներ

Վերոհիշյալ ենթադրությունները ստուգելու համար օգտագործվել են ՀՌԿԿ-Հայաստանի կողմից 2015թ. հուլիսին Հայաստանում անցկացված ներկայացուցչական հարցման (N=1443) տվյալները: Հարցումն իրականացվել է ԱՄՆ ՄԶԳ-ի կողմից ֆինանսավորվող «ՀաՄաՏեղ» ծրագրի շրջանակներում՝ հայաստանցիների դիրքորոշումը տեղական ինքնակառավարման մի շարք հարցերի վերաբերյալ պարզելու նպատակով: Մասնավորապես, հարցման ընթացքում օգտագործվել են ՏԻՄ-երի ներկայացուցիչների հանդեպ հանրային վստահությունը, ինչպես նաև ՏԻՄ-երի աշխատանքի տարբեր ասպեկտների վերաբերյալ հանրային գնահատականները բացահայտող հարցախմբեր²:

ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության վրա ազդող գործոնները որոշելու նպատակով իրականացվել է բազմաչափ գծային ռեգրեսիոն վերլուծություն՝ SPSS 22 վիճակագրական փաթեթի կիրառմամբ: Բազմաչափ ռեգրեսիոն մոդելի գնահատման համար օգտագործվել են հետևյալ փոփոխականները:

Կախյալ փոփոխական

- *Վստահություն ՏԻՄ-երի հանդեպ*

Կախյալ փոփոխականը, այն է՝ վստահությունը ՏԻՄ-ի հանդեպ, երկու առանձին փոփոխականներից (Cronbach's Alpha = .908) կառուցված փոփոխական է («միջին արդյունք»՝ “mean score”): Դրանցից մեկը չափում է վստահությունը համայնքի ղեկավարի հանդեպ, մյուսը՝ ավագանու անդամների³: Մասնավորապես, հարցման

² Հարցման մեթոդաբանության մանրամասների համար, տե՛ս ՀՌԿԿ-Հայաստան. *Բարեփոխումների երկար ճանապարհին. ՀՀ տեղական ինքնակառավարման համակարգը քաղաքացիների աչքերով*. Երևան 2016թ.:

³ Հայաստանում համայնքի ղեկավարը և համայնքի ավագանին տեղական իշխանության համակարգի գլխավոր ներկայացուցիչներն են:

մասնակիցները պատասխանել են հետևյալ հարցերին. «Որքա՞ն էք վստահում հետևյալ անձանց. 1. Համայնքի ղեկավար: 2. Ավագանու անդամ»: Երկու փոփոխականի համար էլ օգտագործվել է գնահատման վեցանիշ սանդղակ (0 = Ամենևին, 1 = Շատ քիչ, 2 = Քիչ, 3 = Ո՛չ շատ, 4 = Շատ, 5 = Լիովին):

Անկախ փոփոխականներ

- *Հանրային ծառայությունների մատուցում*

Հանրային ծառայությունների մատուցումը տաս փոփոխականից (Cronbach's Alpha = .936) կառուցված փոփոխական է («միջին արդյունք»), որը ցույց է տալիս հարցվածների բավարարվածության աստիճանը ՏԻՄ-երի մատուցած ծառայությունների որակից: Մասնավորապես, հարցման մասնակիցները պատասխանել են հետևյալ հարցերին. «Ձեր կարծիքով, ՏԻՄ-երը որքանո՞վ լավ կամ վատ են իրականացնում այս գործողությունները. 1. Համայնքի մաքրության պահպանում, 2. Կրթության, մշակույթի, սպորտի բնագավառների կառավարում, 3. Տեղական ճանապարհների և կամուրջների պահպանում, 4. Առողջապահական հաստատությունների կառավարում, 5. Առևտրի կետերի գործունեության կանոնակարգերի պահպանման վերահսկողություն, 6. Սննդի կետերում առողջապահական չափորոշիչների պահպանման վերահսկողություն, 7. Տեղական վեճերի լուծում, 8. Ջրային ռեսուրսների և անտառների պահպանություն, 9. Օրենքի և կարգի պահպանում, 10. Տեղական հարկերի, տուրքերի, վճարների դրույքաչափերի սահմանում և գանձում»: Բոլոր տաս փոփոխականների համար օգտագործվել է գնահատման վեցանիշ սանդղակ (0 = Ամենևին, 1 = Շատ վատ, 2 = Վատ, 3 = Ո՛չ լավ, 4 = Լավ, 5 = Շատ լավ):

- *Թափանցիկություն*

Թափանցիկությունը չորս փոփոխականից (Cronbach's Alpha = .918) կառուցված փոփոխական է («միջին արդյունք»): Դրանցից մեկի միջոցով հարցման մասնակիցներն ուղղակիորեն գնահատել են ՏԻՄ-երի աշխատանքի թափանցիկությունը. «Ինչպե՞ս կգնահատեք ՏԻՄ-երի գործունեության

թափանցիկությունը»: Գնահատումը կատարվել է հնգանիշ սանդղակով (1 = Շատ ցածր, 2 = Ցածր, 3 = Ո՛չ բարձր, 4 = Բարձր, 5 = Շատ բարձր): Մյուս երեք փոփոխականները բացահայտել են ՏԻՄ-երի թափանցիկության գործնական այլ չափումները: Մասնավորապես, հարցման մասնակիցները պատասխանել են հետևյալ հարցերին. «Որքա՞ն լավ կամ վատ են կիրարկում ՏԻՄ-երը հետևյալ ընթացակարգերը. 1. ՏԻՄ-երի գործունեության մասին համայնքի բնակիչների իրազեկում, 2. Համայնքի բյուջեի մասին բնակիչների իրազեկում, 3. Գնումների կատարման թափանցիկություն, օրինակ՝ մրցույթների կազմակերպում»: Բոլոր երեք փոփոխականների համար օգտագործվել է հնգանիշ սանդղակ (1 = Շատ վատ, 2 = Վատ, 3 = Ո՛չ լավ, 4 = Լավ, 5 = Շատ լավ):

- *Մասնակցություն ՏԻՄ որոշումների ընդունմանը*

Մասնակցություն ՏԻՄ որոշումների ընդունմանը մեկ փոփոխական է: Մասնավորապես, այն ընդհանուր հարց է ՏԻՄ-երի կողմից քաղաքացիներին որոշումների կայացման գործում ներգրավելու մասին. «Որքա՞ն լավ կամ վատ են կիրարկում ՏԻՄ-երը հետևյալ ընթացակարգերը. 1. Տեղական որոշումների կայացման գործընթացի մեջ բնակիչների ներգրավում»: Այս փոփոխականի համար հարցման (և վերլուծության) ընթացքում օգտագործվել է հնգանիշ սանդղակ (1 = Շատ վատ, 2 = Վատ, 3 = Ո՛չ լավ, 4 = Լավ, 5 = Շատ լավ):

- *Մասնակցություն համայնքի ղեկավարի որոշումների ընդունմանը*

Մասնակցություն համայնքի ղեկավարի որոշումների ընդունմանը երկու փոփոխականներից (Cronbach's Alpha = .973) կառուցված փոփոխական է («միջին արդյունք») և վերաբերում է համայնքի ղեկավարի կողմից բնակիչների կարծիքները հաշվի առնելու հանգամանքին: Մասնավորապես, հարցման մասնակիցները պատասխանել են հետևյալ երկու հարցին. «Վերջին 6 ամիսների ընթացքում որքա՞ն հաճախ է համայնքի ղեկավարը հանդիպել իր ընտրազանգվածի հետ, որպեսզի. 1. Քննարկի և համաձայնության գա համայնքի զարգացման ծրագրերի շուրջ, 2. Քննարկի տեղական խնդիրները և դրանց լուծմանն ուղղված քայլերը»: Այս հարցերի համար օգտագործվել է վեցանիշ

սանդղակ (0 = Երբեք, 1 = Տարին մեկ անգամ, 2 = Տարին երկու անգամ, 3 = Ամեն եռամսյակ, 4 = Ամեն ամիս, 5 = Ամեն շաբաթ):

- *Կոռուպցիայի առկայություն*

Կաշառքի առկայությունը չափվել է մեկ փոփոխականով: Վերջինս բացահայտել է հարցվածների ընկալումները ՏԻՄ-երում կաշառատվության մակարդակի վերաբերյալ: Մասնավորապես, հարցման մեջ այս փոփոխականն ընդգրկվել է հետևյալ ձևակերպմամբ. «Հետևյալ գործոնները որքանո՞վ կարող են օգնել քաղաքացիներին՝ լուծելու իրենց խնդիրները ՏԻՄ-երի միջոցով. 1. Կաշառք»: Այս փոփոխականի գնահատման համար օգտագործվել է եռանիշ օրդինալ սանդղակ (0 = Ամեննին, 1 = Որոշ չափով, 2 = Շատ):

Հսկիչ (control) փոփոխականներ

- *Տարիք*

Հարցման ընթացքում գրանցվել է հարցազրույցի պահին մասնակիցների ունեցած տարիքը:

- *Սեռ*

Հարցման մասնակիցների սեռը գրանցվել է երկնիշ սանդղակի միջոցով (1 = Տղամարդ, 2 = Կին):

- *Տնտեսական կարգավիճակ*

Հարցման մասնակիցների տնտեսական կարգավիճակը բացահայտելու համար օգտագործվել է հետևյալ փոփոխականը. «Ներքոհիշյալից ո՞րն է լավագույնս նկարագրում Ձեր ընտանիքի տնտեսական վիճակը»: Պատասխանները գրանցելու համար օգտագործվել է հնգանիշ սանդղակ (1 = Ընտանիքի եկամուտը չի բավականացնում սնունդ գնելու համար, 2 = Ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ, բայց ոչ հագուստ գնելու համար, 3 = Ընտանիքի եկամուտը բավականացնում է սնունդ և հագուստ, բայց ոչ թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա գնելու համար, 4 = Ընտանիքի եկամուտը բավականացնում է թանկարժեք կենցաղային տեխնիկա, օրինակ՝ սառնարան կամ լվացքի մեքենա գնելու համար, 5 = Ընտանիքի եկամուտը բավականացնում է ցանկացած բան գնելու համար):

- *Կրթություն*

Հարցման մասնակիցների կրթական ցենզը որոշելու համար օգտագործվել է հետևյալ փոփոխականը. «Ո՞րն է ամենաբարձր կրթական մակարդակը, որ Դուք ստացել եք մինչ այժմ»: Պատասխանները գրանցվել են ութանիշ սանդղակի օգնությամբ (0 = Չեմ ստացել հիմնական կրթություն, 1 = Հիմնական (լրիվ կամ ոչ լրիվ), 2 = Թերի միջնակարգ, 3 = Միջնակարգ, 4 = Միջին մասնագիտական, 5 = Թերի բարձրագույն, 6 = Բարձրագույն, 7 = Հետբուհական գիտական աստիճան):

Արդյունքներ

Սույն ուսումնասիրության շրջանակներում իրականացվել է բազմաչափ գծային ռեգրեսիոն վերլուծություն՝ պարզելու, թե որքանով են հանրային ընկալումները ՏԻՄ-երի մատուցած հանրային ծառայությունների, ՏԻՄ-երի թափանցիկության, ՏԻՄ-երի կողմից բնակիչների կարծիքը հաշվի առնելու և ՏԻՄ-երում կաշառատվության առկայության վերաբերյալ ազդում ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության մակարդակի վրա: Բազմագործոն ռեգրեսիոն մոդելը վիճակագրական նշանակալիությամբ կանխատեսում է ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահությունը $F(5, 750) = 222.187, p < .001, \text{adj. } R^2 = .59$. Մասնավորապես, անկախ փոփոխականներից կառուցված մոդելը բացատրում է կախյալ փոփոխականի վարիացիան 59 տոկոսով: Ինչպես ցույց է տալիս *Աղյուսակ 1-ը* (Մոդել 1), հինգ անկախ փոփոխականներից չորսը («ծառայությունների մատուցում», «թափանցիկություն», «ներգրավում որոշումների կայացման գործընթացի մեջ (համայնքի ղեկավար)» և «կաշառատվություն») վիճակագրական նշանակալիությամբ նպաստում են մոդելի կանխատեսիչ ուժին: «Ծառայությունների մատուցում» և «թափանցիկություն» փոփոխականներն ազդեցության նույն գործակիցն ունեն մոդելում ($\beta = .507, p < .001$), մինչդեռ ազդեցության ամենաթույլ գործակիցը «կաշառատվության» պարագայում է ($\beta = -.134, p < .01$): Այստեղ ազդեցությունը նաև բացասական է. որքան բարձր է կաշառատվության առկայության վերաբերյալ զգացողությունը, այնքան ցածր է վստահությունը ՏԻՄ-երի հանդեպ:

Ինչպես կարելի է տեսնել նույն *Աղյուսակ 1*-ում (Մոդել 2), սոցիալ-դեմոգրաֆիական փոփոխականների («տարիք», «սեռ», «տնտեսական կարգավիճակ» և «կրթություն») ներմուծումը նոր մոդելի մեջ էական փոփոխություններ չի առաջացնում ($F(9, 744) = 127.793, p < .001, \text{adj. } R^2 = .60$): ՏԻՄ-երի գործառույթային անկախ փոփոխականների կանխատեսիչ վարքագիծը գրեթե չի փոխվում (միայն փոքր-ինչ նվազում է «թափանցիկության» գործակիցը՝ մնալով վիճակագրորեն նշանակալի): Սոցիալ-դեմոգրաֆիական գործոններից միայն «տնտեսական կարգավիճակ» և «կրթություն» են վիճակագրական նշանակալիությամբ նպաստում մոդելին: Ընդ որում, «կրթության» ազդեցության գործակիցը չափազանց փոքր է:

Աղյուսակ 1. ՏԻՄ-երի աշխատանքի վերաբերյալ ընկալումների և սոցիալ-դեմոգրաֆիական հատկանիշների ազդեցությունը ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության մակարդակի վրա (բազմաչափ գծային ռեգրեսիա)

<i>Փոփոխականներ</i>	Մոդել 1				Մոդել 2			
	B	SE	t	Sig.	B	SE	t	Sig.
Constant	-.520	.169	-3.077	.002	-.233	.297	-.784	.433
Ծառայությունների մատուցում	.507***	.055	9.218	.000	.503***	.055	9.202	.000
Թափանցիկություն	.507***	.087	5.842	.000	.460***	.087	5.304	.000
Ներգրավում որոշումների կայացման մեջ (համայնքի ղեկ.)	.312***	.032	9.857	.000	.299***	.032	9.395	.000
Ներգրավում որոշումների կայացման մեջ (ՏԻՄ)	.068	.074	.917	.359	.090	.074	1.217	.224
Կաշառատվություն	-.134**	.048	-2.800	.005	-.130**	.048	-2.735	.006
Տարիք	-	-	-	-	-.002**	.002	-.815	.416
Սեռ	-	-	-	-	-.059	.086	-.682	.495
Տնտեսական կարգավիճակ	-	-	-	-	.161*	.048	3.357	.001
Կրթություն	-	-	-	-	-.094*	.030	-3.082	.002

*Օւանթադրություն. *p<.05; **p<.01; ***p<.001; Մոդել 1՝ adj. R2 = .59; Մոդել 2՝ adj. R2 = .60*

Քննարկում և առաջարկներ

Սույն վերլուծության արդյունքները հաստատում են այլուր և ավելի վաղ կատարված եզրահանգումները: Մասնավորապես, մեր արդյունքները ցույց են տալիս, որ իշխանությունների գործունեության հանրային գնահատականը

քաղաքական վստահության աղբյուր է հանդիսանում: Ավելին, հանրային գնահատականներն ազդում են քաղաքական վստահության վրա նաև տեղական մակարդակում:

Մեր կողմից դիտարկվող գրեթե բոլոր անկախ փոփոխականներն իրենց ազդեցությունն ունեն քաղաքական վստահության մակարդակի վրա: Սակայն, գործառույթներից երկուսի՝ հանրային ծառայությունների մատուցման և թափանցիկության վերաբերյալ ընկալումներն ամենաազդեցիկն են քննարկվող անկախ փոփոխականների շարքում: Հետաքրքրական է կաշառատվության ընկալումների վիճակագրորեն նշանակալի սակայն համեմատաբար թույլ ազդեցությունը ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության մակարդակի վրա: Մի կողմից, այս արդյունքը հերքում է այն դրույթը, համաձայն որի, զարգացող երկրներում կոռուպցիայի, մասնավորապես՝ կաշառատվության առկայությունը, միշտ չէ, որ դիտվում է որպես կատարյալ չարիք: Ըստ որոշ քաղաքագետների, զարգացող երկրներում կոռուպցիան հաճախ հանդես է գալիս որպես «անհրաժեշտ չարիք», քանի որ «յուղում» և աշխատեցնում է «ժանգոտված» պետական ապարատը (այս մոտեցման քննարկման համար տե՛ս Seligson 2002): Մյուս կողմից, հայաստանյան ՏԻՄ-երում կաշառատվության առկայության գործոնի համեմատաբար փոքր ազդեցությունը թույլ է տալիս ենթադրել, որ Հայաստանում մարդկանց որոշ խմբերի համար կաշառատվության առկայությունը գուցե և «անհրաժեշտ չարիք է», որը երբեմն հնարավորություն է տալիս օգտվել օրինական ճանապարհներով անհասանելի հանրային ռեսուրսներից: Կամ էլ՝ հանրային ընկալումներում, իրենց գործը լավ կատարող ՏԻՄ ներկայացուցիչներն ավելի են արժևորված, քան աշխատանքային անբասիր նկարագիր ունեցողները:

Տեսական խնդիրներին նպաստ բերելուց զատ, սույն վերլուծության արդյունքները նաև կիրառական նշանակություն ունեն: Նախևառաջ, դրանք մի կարևոր ուղերձ են պարունակում, որը կարելի է ձևակերպել այսպես. **Հայաստանում տեղական իշխանությունների հանդեպ հանրային վստահություն ձևավորելու բանալին հենց**

տեղական իշխանությունների ձեռքում է: Վերլուծության արդյունքները Հայաստանի օրինակով ցույց են տալիս, որ տեղական մակարդակում քաղաքական վստահության ձևավորման ներքին գործոններ կան: Այսինքն, ՏԻՄ-երն իրենք արդյունավետ և թիրախավորված աշխատանքի միջոցով կարող են շահել կամ պահպանել հանրության վստահությունը: Այս եզրակացությունը բնականաբար հակամետ է այն ենթադրությանը, թե Հայաստանի այսօրվա ընդհանուր մթնոլորտում ՏԻՄ-երը ոչինչ չեն կարող անել հանրային վստահություն շահելու համար, քանի որ հանրային վստահության աղբյուրները ՏԻՄ-երից դուրս են գտնվում: Վերլուծության արդյունքների տրամաբանությունը թելադրում է հետևյալ առաջարկները՝ ուղղված հայաստանյան ՏԻՄ-երին, ինչպես նաև տեղական ինքնակառավարման խնդիրներով զբաղվող պետական գերատեսչություններին և հասարակական կազմակերպություններին:

1. Բարելավել համայնքային ծառայությունների որակն այնպես, որ համայնքի բնակիչները սեփական փորձառությամբ զգան դրական փոփոխությունները: Սա թերևս ամենաբարդ առաջարկն է, քանի որ անմիջականորեն կապված է հայաստանյան ՏԻՄ-երի սահմանափակ ռեսուրսների իրողության հետ: Մեր ուսումնասիրության մեջ «հանրային ծառայությունների մատուցում» սանդղակն իր մեջ էր ներառել 10 տարբեր համայնքային ծառայություն (օրինակ՝ համայնքի մաքրության պահպանում, կրթության և մշակույթի կառավարում կամ համայնքային ճանապարհների պահպանում): Այդ ծառայությունների բարձր որակը հաճախ կախված է ֆինանսական միջոցների առկայությունից: Այնուամենայնիվ, այդ միջոցների բացակայության պարագայում, ՏԻՄ-երը կարող են ծառայություններից յուրաքանչյուրի համար համայնքի բնակիչների շրջանում ձևավորել «չափավոր» սպասելիքներ և իրականացնել այդ սպասելիքները: Կարևոր է, որ ՏԻՄ-երը հանրությանը ներգրավեն ծառայությունների մատուցման խնդիրների քննարկման գործընթացում: ՏԻՄ-երը կարող են նաև պարբերաբար գնահատել համայնքի բնակիչների վերաբերմունքը ՏԻՄ-երի մատուցած ծառայությունների հանդեպ՝ օգտագործելով ամենահասանելի միջոցները (օրինակ՝ ոչ ֆորմալ հանդիպումներ կամ համացանցային հարթակներ):

2. Բարձրացնել ՏԻՄ-երի պրոակտիվ թափանցիկության մակարդակը: ՏԻՄ-երն իրենք պետք է համայնքի բնակիչներին իրազեկեն ՏԻՄ-երի ընթացիկ գործերի, ծրագրերի, ինչպես նաև գործունեության ոչ տեսանելի կողմերի մասին, անկախ այն հանգամանքից՝ բնակիչները հետաքրքրվել են այդ տեղեկություններով, թե ոչ: Վերջիններիս շարքում հատկապես կարևոր է տեղեկատվությունը համայնքի ֆինանսական մուտքերի և ծախսերի վերաբերյալ (օրինակ՝ համայնքի բյուջեն, պարտքերը, գնումները, գույքի օտարումները և այլն): Պրոակտիվ թափանցիկությունն իրականություն դարձնելու համար ՏԻՄ-երի ներկայացուցիչները կարող են դիմել հաղորդակցության ինչպես ավանդական (օրինակ՝ բակային հանդիպումներ, թերթոնների դռնեղուռ տարածում կամ հայտարարություն ՁԼՄ-ներով, ցուցանակներ⁴), այնպես էլ ավելի ժամանակակից (օրինակ՝ համացանցային հարթակներ, հեռախոսազանգ կամ sms հաղորդագրություն) միջոցների: Նորագույն տեխնոլոգիաների միջոցով պրոակտիվ թափանցիկության օրինակ է Ախուրյան համայնքի առցանց բյուջեն (<http://www.akhuryanbudget.am/view/1>), որը ստեղծվել է տարբեր շահագրգիռ հաստատությունների համատեղ ջանքերով:

3. Համայնքի բնակիչներին մասնակից դարձնել համայնքի կյանքին վերաբերող որոշումների ընդունմանը: Հետևելով վերլուծության արդյունքներին՝ այս առաջարկը վերաբերում է հատկապես համայնքի ղեկավարներին: Վերջիններս, պետք է պարբերաբար հանդիպեն բնակիչների հետ համայնքի զարգացման ծրագրերը և համայնքի առջև ծառայած խնդիրները քննարկելու և դրանց վերաբերյալ խորհուրդներ ստանալու համար: Այսպիսի հանդիպումների և քննարկումների միջոցով համայնքի ղեկավարները հավակնում են ոչ միայն հանրային վստահություն ձեռք բերել, այլև ավելի նպաստավոր որոշումներ կայացնել իրենց համայնքների համար: Ինչպես և նախորդ առաջարկի դեպքում, բնակիչների կարծիքները լսելու համար համայնքի ղեկավարները կարող են օգտագործել հաղորդակցման և՛ ավանդական (օրինակ՝ բակային հանդիպումներ),

⁴ Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբի (2016: 21) ուսումնասիրության համաձայն, Հայաստանի 17 ամենամեծ համայնքներից ընդամենը մեկն ունի օրենքով նախատեսված քանակությամբ իրազեկման ցուցանակներ:

և՛ ավելի ժամանակակից (օրինակ՝ առցանց կամ sms հարցումներ) միջոցներ: Թեև այս առաջարկը վերաբերում էր համայնքի ղեկավարներին, վստահաբար կարելի է ասել, որ ավագանու անդամները ևս կնպաստեն ՏԻՄ-երի հանդեպ բնակիչների վստահության աճին, եթե պարբերաբար դիմեն վերջիններիս նրանց կարծիքը լսելու նպատակով: Հարկ է հավելել, որ համայնքի բնակիչներին որոշումների կայացման գործընթացներում ներգրավելու առումով ուսանելի կարող է լինել մերձբալթյան երկրների էլեկտրոնային կառավարման և էլեկտրոնային ժողովրդավարության փորձի ուսումնասիրումը (Ruus 2011: 283-285; European Commission 2015):


4. Միջոցներ ձեռնարկել ՏԻՄ-երում կաշառաստվության հնարավոր դրսևորումները վերացնելու ուղղությամբ: Սեփական հաստատությունների հանդեպ հանրային վստահությունը շահելու համար ՏԻՄ-երը ստիպված են ոչ միայն պայքարել կաշառաստվության երևույթների դեմ այլև քայլեր ձեռնարկել համայնքի բնակիչներին վստահեցնելու, որ ՏԻՄ-երի մատուցած ծառայությունները հասանելի են բոլորին առանց նախապայմանների՝ ինչպես որ սահմանված է օրենքով: Կաշառքի միջոցով հարց լուծելու անհնարիությունը գործնականում ցուցադրելու համար, ՏԻՄ-երը, օրինակ, կարող են առավելագույնս հստակեցնել, պարզեցնել և արագացնել իրենց ծառայությունների ընթացակարգերը: Որոշ ծառայությունների նկատմամբ կարելի է հանրային վերահսկողություն սահմանել՝ դրանց մատուցումը դարձնելով առավելագույնս թափանցիկ (օրինակ՝ տեսախցիկների տեղադրում և առցանց հեռարձակում): Հարկ է դրած դեպքերում ՏԻՄ-երը պետք է նաև հաշվետու դարձնեն իրենց ոչ բարեխիղճ պաշտոնյաներին և աշխատակիցներին:

5. Հանրային վստահության ձեռքբերումը դարձնել նպատակային քաղաքականություն: Համայնքի բնակիչների վստահության ձեռքբերումը պետք է դառնա ՏԻՄ-երի ամենօրյա գործունեության թիրախներից մեկը: Այլ կերպ ասած, ՏԻՄ-երն իրենց պարտականությունները բարձր որակով կատարելուց բացի, պետք է ջանան նաև ի ցույց դնել այդ որակը և դրանով շահել բնակիչների վստահությունը (օրինակ՝ ոչ միայն պայքարեն կոռուպցիայի դեմ, այլև ցույց տան,

որ ՏԻՄ-ում այն գոյություն չունի): Բարեբախտաբար, ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության աղբյուրները սահմանափակված չեն միայն ծառայությունների մատուցման վերաբերյալ հանրային ընկալումներով: ՏԻՄ-երը կարող են հանրության վստահությունը շահել նաև վերը թվարկված ոչ ծախսատար միջոցներով (օրինակ՝ թափանցիկություն կամ տեղական ժողովրդավարություն):

ՏԻՄ-երը պետք է գիտակցեն, որ հանրային վստահության բարձր մակարդակը կարող է բազմաթիվ դրական արդյունքներ ունենալ ՏԻՄ-երի գործունեության համար հենց հանրային ծառայությունների մատուցման տեսանկյունից: Մասնավորապես, հանրային վստահությունը սոցիալական կապիտալ է, որը կարող է վերածվել տնտեսական կապիտալի: Օրինակ՝ մեծ վստահություն վայելող ՏԻՄ-ը կարող է դրամական հանգանակություն ստանալ իր՝ արտերկրում գտնվող բնակիչներից՝ համայնքում որևէ խնդիր լուծելու համար: Հանրային վստահություն վայելող ՏԻՄ-ն ավելի մեծ հավանականությամբ կարող է գրավել մասնավոր ընկերությունների կամ ՀԿ-ների համագործակցությունը՝ համայնքում ծառայությունների որակը բարձրացնելու համար: Հետևաբար, առաջին հայացքից ոչ նյութական հանրային վստահություն ձեռք բերելով՝ ՏԻՄ-երն իրականում ձեռք են բերում նյութական հնարավորությունների ներուժ: Այդ նյութական միջոցներով ՏԻՄ-երը կարող են բարելավել հանրային ծառայությունների որակը և, ինչպես ցույց են տալիս այս ուսումնասիրության արդյունքները, նաև շահել հանրության վստահությունը: *Գծապատկեր 2*-ը ցույց է տալիս, թե ինչպես է հանրային վստահությունը փոխակերպվում տնտեսական կապիտալի, որն էլ իր հերթին հանգեցնում է ծառայությունների որակի բարելավմանը, հետևաբար՝ ՏԻՄ-ի հանդեպ վստահության աճին:

Գծապատկեր 2. Հանրային վստահության փոխակերպումը տնտեսական կապիտալի և ինքն իրեն



1-2. Հանրային վստահության շնորհիվ ՏԻՄ-երը ձեռք են բերում տնտեսական աջակցություն (կապիտալ):

2-3. Ձեռք բերված տնտեսական միջոցների օգնությամբ ՏԻՄ-երը բարելավում են մատուցած ծառայությունների որակը:

3-1. Ծառայությունների որակի բարելավումը հանգեցնում է ՏԻՄ-երի հանդեպ հանրային վստահության աճին:

Օգտագործված գրականություն

Ժուռնալիստների «Ասպարեզ» ակումբ (2016) *Հայաստանի խոշորագույն 17 համայնքների տեղական ինքնակառավարման մարմինների աշխատանքի թափանցիկության մոնիտորինգ*. Ջեկույց:

Almond, G. A., and S. Verba (1965) *The civic culture: Political attitudes and democracy in five nations*. Boston, MA: Little, Brown and Company.

Anderson, C., and Y. Tverdova (2003) Corruption, political allegiances, and attitudes toward government in contemporary democracies. *American Journal of Political Science* 47(1): 91–109.

Attmore, R. (2011) Addressing fiscal policy concerns and restoring public trust in government. *Journal of Government Financial Management* 12: 8–10.

- Blind, P.K. (2007) *Building trust in government in the twenty-first century: Review of literature and emerging issues*. Paper presented at 7th Global Forum on Reinventing Government, 26-29 June, Vienna, Austria.
- Caucasus Research Resource Centers (2009-2015) "Caucasus Barometer". [dataset] Retrieved from <http://www.crrccenters.org/caucasusbarometer/> on {11 January 2017}.
- Christensen T., and P. Læg Reid (2005) Trust in government: The relative importance of service satisfaction, political factors, and demography. *Public Performance and Management Review* 28(4): 487–511.
- Della Porta, D. (2000) Social capital, beliefs in government and political corruption. In: SJ Pharr and RD Putnam (eds) *Disaffected Democracies: What's Troubling the Trilateral Countries?* Princeton, NJ: Princeton University Press, 202–229.
- European Commission (2015) *Egovernment in Lithuania*. Report.
- Fitzgerald, J., and J. Wolak (2016) The roots of trust in local government in Western Europe. *International Political Science Review*, 37(1): 130-146.
- Glanville, J.L., and P. Paxton (2007) How do we learn trust? A confirmatory tetrad analysis of the sources of generalized trust. *Social Psychology Quarterly* 70(3): 230–242.
- Hetherington, M.J. (2004) *Why trust matters: Declining political trust and the demise of American liberalism*. Princeton: Princeton University Press.
- Hood, C. (1991) A public management for all seasons. *Public Administration* 69(1): 3–19.
- Mishler, W., and R. Rose (2001) What are the origins of political trust? Testing institutional and cultural theories in post-Communist societies. *Comparative Political Studies* 34(1): 30–62.

- Kim, S. (2010) Public trust in government in Japan and South Korea: Does the rise of critical citizens matter. *Public Administration Review* 70(5): 801–810.
- Kim, S., and J. Lee (2012) E-participation, transparency and trust in local government. *Public Administration Review* 72(6): 819–828.
- Marien S., and M. Hooghe (2011) Does political trust matter? An empirical investigation into the relation between political trust and support for law compliance. *European Journal of Political Research* 50(2): 267–291.
- Marlowe, J. (2004) Part of the solution or cogs in the system? The origins and consequences of trust in public administrators. *Public Integrity* 6(2): 93–113.
- Miller, A. H., and O. Listhaug (1990) Political parties and confidence in government: A comparison of Norway, Sweden and the United States. *British Journal of Political Science* 20 (3): 357–386.
- Morris, S.D., and J.L. Klesner (2010) Corruption and trust: Theoretical considerations and evidence from Mexico. *Comparative Political Studies* 43(10): 1258–1285.
- Newton, K., and P. Norris (2000) Confidence in public institutions: Faith, culture, or performance? In S.J. Pharr and R.D. Putnam (eds) *Disaffected Democracies: What's Troubling the Trilateral Countries?* Princeton: Princeton University Press, 52–73.
- Norris, P. (1999) *Critical citizens: Global support for democratic governance*. Oxford: Oxford University.
- Piotrowski, S.J., and G.G. Van Ryzin (2007) Citizen attitudes toward transparency in local government. *American Review of Public Administration* 37(3): 306–323.
- Putnam, R.D. (1993) *Making democracy work*. Princeton: Princeton University Press.
- Putnam, R. D. (2000) *Bowling alone*. New York: Simon and Schuster.

- Ruus, Jü. (2011) Democratic participation at the local level in post-communist states: Estonia, Latvia, Lithuania. In T. Schiller (ed) *Local Direct Democracy in Europe*. Wiesbaden: VS Verlag für Sozialwissenschaften, 268–289.
- Uslaner, E.M. (2002) *The moral foundations of trust*. Cambridge: Cambridge University Press.
- Scholz, J. T., and M. Lubell (1998) Trust and taxpaying: Testing the heuristic approach to collective action. *American Journal of Political Science* 42(2): 398–417.
- Seligson, M. (2002) The impact of corruption on regime legitimacy: A comparative study of four Latin American countries. *Journal of Politics* 64(2): 408–433.
- Tolbert C.J., and K. Mossberger (2006) The effect of E-government on trust and confidence in government. *Public Administration Review* 66(3): 354–369.
- Torres, L. (2005) Service charters: Reshaping trust in government – The case of Spain. *Public Administration Review* 65(6): 687–699.
- Ulbig, S. (2008) Voice is not enough: The importance of influence in political trust and policy assessments. *Public Opinion Quarterly* 72(3): 523–539.
- Uslaner, E.M., and M. Brown (2005) Inequality, trust, and civic engagement. *American Politics Research* 33(6): 868–894.
- Van der Meer, T. (2010) In what we trust? A multi-level study into trust in parliament as an evaluation of state characteristics. *International Review of Administrative Sciences* 76(3): 517–536.
- Wong, T.K., P. Wan and H.M. Hsiao (2011) The bases of political trust in six Asian societies: Institutional and cultural explanations. *International Political Science Review* 32(3): 263–281.

Zhao, D., and W. Hu (2015). Determinants of public trust in government: Empirical evidence from urban China. *International Review of Administrative Science* 0(0) 1–20.